

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐ

Ս. ՏԻՍՈՅԵՆՍԻ ՎԱՆՔ Ի ԿԱՐԿԱՌ

ՏԵՂԱԳՐԱԿԱՆ. — Ս. Տիմոթէոսի վանքը կը գտնուէր Կարկառա՞ջաղաքին մօտ, Եփրատ գետի ափին վրայ. — Կիւլէտէրեան, Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, էջ 295:

ՊԱՏՄԱԿԱՆ ԵՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ. — Ս. Տիմոթէոսի վանքին պատմութեան մասին տեղեկութիւններ չեն հասած մեզի: Վանքին միակ ծանօթ շրջանն է ԺԶ. Գարու վերջը երբ Պետրոս վրդ. Կարկառեցի հաստատուած էր հոն և հիմնած արգիւնուար դաստառն մը:

Պետրոս վրդ. Կարկառեցի ծնած է Կարկառ փոքր քաղաքին մէջ 1552 ին: Հայրը կը կոչուէր մահաեսի Եսայի: Իր սուսմը ստացած է Ամթեցի Յովհաննէս Շիրակ վարդապետի մօտ (+ 1582): Իրբև գիտուն վարդապետ հռչակուած է 1586 ին: Իրբև եպիսկոպոս կը յիշուի 1590 ին: Գրիգոր Գարանազի գովեստով կը գրէ իր մասին. «Այս Պետրոս կարի յոյժ առաքինի էր, և կարի հմուտ գովով Հին և Նոր կտակարանաց, նրբից և արտաքնաց. և ժիր էր ի աշակերտաց վարժումն և ի դաս տեսնն. և շատ ժամանակ նստեալ կայր ի վանս Կարկառու» (Ժամանակագրութիւն, էջ 351):

Կարկառեցիի աշակերտներէն մէկը իրենց դասարանի կեանքէն յիշատակ մը արձանագրած է 1594 ին Կարկառ գրուած «Գիրք Սահմանաց և Բառարան»ին մէջ. «... յիշեցէք զսուսուցիչ զՏէր Պետրոս վարդապետն, որ ի վերջին դասն ժամանակիս իբր զնոր արուստակ տաւաւաի երևեալ փայլմամբ յազգիս Հայոց, որ գաւառ տասցեալ դասն աւրինակէտք ամէն աշակերտ իւրեան. զի աւրինակն մէկ էր, և աշակերտացն կարգաւու շէր ժամաներ, զոր մեք Չ աշակերտք, և այլ աւելի, աւրինակէտք դաս ի վանքն Կարկառայ, ի դասն ժամանակիս, որ մէկ մարդսն Չ Ֆլորի խարած ասնէին ...» (Թարս Ազգար, Բ., էջ 454):

Հալէպի Հայերը Կիլիկիոյ Ազգարի Ջուզայեցի Կաթողիկոսին մահէն ետք

զինքը կը բարձրացնէս հայրապետական տիտ, 1601 ին, և եօթ տարի կը մնայ Հալէպի մէջ իրբև Կաթողիկոս, մինչ Սիսի մէջ Կիլիկիոյ Աթոսին վրայ կը գտնուէր Յովհաննէս Գ. Անթէպցի:

Կարկառեցին կը վախճանի 1608 ին, Հալէպի մէջ, և կը թաղուի տեղւոյն Ս. Բառասնից Մանկանց Եկեղեցին: Ընդարձակ տապանադիրը յօրինած է իր աշակերտներէն Թումա վրդ. Կարկառեցի:

Պետրոս Կարկառեցի սենցած է բազմաթիւ աշակերտներ, որոնցմէ 10 հասին տուած է վարդապետական գաւազան (Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, էջ 297: Հմմտ. նաև էջ 271): Այդ աշակերտներն են, այբուբենի կարգով,

1. — Գաղար վրդ. Չնուսցի. — Գար., ժամանակագրութիւն, էջ 363:
2. — Զաւարիա վրդ. Վանեցի, Գիւլի արզի, պատրիարք Կ. Պոլսոյ (+ 1640). — Նախ աշակերտած է Բաղիշեցի Բարսեղ մեծ վարդապետին և ապա Պետրոսի մօտ գալով անկէ ստացած է վարդապետական աստիճան (Գար., էջ 364):
3. — Թումա վրդ. Կարկառեցի, վաղաժող: Յօրինած է իր սուսուցչին Պետրոսի ընդարձակ և արժէքուար տապանագիրը, 1608 ին. — Պատմ. Կթղ. Կիլ., էջ 298:
4. — Խաչատուր վարդապետ. — Կարապետ վրդ. Երզնկացի և Յովհաննէս Կարկառեցի գրիչ կը գովեն զինքը իրբև «քաջ երաժիշտ». — Պատմ. Կթղ. Կիլ., էջ 271 և 254:
5. — Կարապետ վրդ. Երզնկացի կամ Թիլուանցի, Բոս. — Եղած է աշակերտ Երզնկացի Ղազար վարդապետի բայց գաւազանի իշխանութիւնը ստացած է Պետրոսէն, Հալէպի մէջ (Գար., էջ 357): Ընդարձակ բայց անարուեստ ներբողեան մը գրած է «Ի թաղումն վարդապետին իւրոյ Տեսան Պետրոսի Կաթողիկոսի Կարկառեցու, և Տեսան Գրիգորի Ուսուցիցու, որ առաջինն Սրբապիսն էր անուն նորա, Կաթողիկոս էջմիածին»: Թիլուանցին մի ա մի կը թուէ այն հեղինակները և գիրքերը որ կը սերտէին այդ շրջանին. — Պատմ. Կթղ. Կիլ., էջ 267-277: Սիւրմէեան, Պատմ. Հալէպի Հայոց, Գ. Հատար, էջ 129-145:

6. — Կարապետ Վրդ. Թլիուրանցի (+ 1607). — Կարկանդակի հրէջ աշակերտը: Երկու տարի առաջնորդ նստած է Երզրնկայի Տիրաշէն վանքը և թալանուած սրբութիւնները յաջողած է հտ ստանալ: Ետքը գացած է Լեւոյց աշխարհը և հոն վախճանած. — Դար., էջ 352: Կիւլ., էջ 271:

7. — Վազար Վրդ. Երզնկացի (+ 1600). — Նսխ հոթ տարի կ'աշակերտի Սերոստացի Աստուածատուր վարդապետին (+ 1587), ապա կը դիմէ «ի համբաւն Կարկանդակն Պետրոսին և հոթն տարի այլ դեպքերնով ի դրսնս լսարանի նորա, և յետ հոթն ամաց ապա կէն յաշխարհն մեր, ի նսեմ և երկկայացեալ ժամու լոյս ծագեաց խաւարեալ ողոցս: Եւ զարդարեալ էր տեսականան և գործնականան և երաժշտական երգաւք քաղցրածայնութեամբն»: Ան բաւական ճիգ կը թափէ ժամանակի անհաշիւ զեղծունեքը ուղղելու, բայց շատ յաջողութիւն չի գտներ, և վաղամահ կը վախճանի Երզնկայի մէջ և կը թաղուի Ս. Սարգիս Եկեղեցին. — Դար., էջ 352-6:

8. — Վազար Վրդ. Տարանկացի. — Դար., էջ 363:

9. — Մաղախ Վրդ. Թոխարեցի (+ 1634). — Սիրած է ճգնաւորական կեանքը, ուստի զգիւր ժամանակն հալածական եկաց անհանգիստ կենօք, և թէ լինէր՝ երկու ամառք յաւելի կ'ամ պակաս յերուսաղէմ կենար, և այլ ուրեք բնաւ մէկ տարի չէր կենալ, ոչ յանապատի՝ ի մէջ սրբոց, և ոչ ի մէջ աշխարհի՝ հետ անսրբոց: Վասն իւր անհանգիստ բարուցն և ոչ մի աշակերտ ստացաւ, ոչ լուս և ոչ վատ» (Դար., էջ 364): Ուխտի գացած է նաև Հասմ սուրբ առաքելոց գերեզմաններուն 1625 թուին (Դար., էջ 382): Ի վերջոյ կ'երթայ Վանայ կղզին և հոն կը վախճանի (Դար., էջ 291):

Իրմէ ունինք յիշատակարան մը, գրբուած 1602ին, ուր կը յայտնէ թէ Մահմատ չուուշ, յարձակելով Եւզոկիոյ վրայ, շատ աւերներ գործած է, իր գիրքերէն ալ շատերը կրակի մօտնուած են և շատերը կողոպուտի. — Յուլի 2 հա. Ս. Յակոբեանց, Գ. Հատար, էջ 131:

10. — Մարտրոս Վրդ. Շեկուացի (+ 1632). — Կարկանդակի նշանաւոր աշակերտներէն մին, որ իրմէ ստացած է նաև եպիսկոպոսական ձեռնդրութիւն (Յուլի 2 հա. Ս. Յակոբեանց, Բ., էջ 170): Երկար տարիներ վարած է Չնքուշի Սիրահայեց Ս. Աստուածածին վանքին առաջնորդութիւնը (1593-1632): Վկայուած է իբրև «այր փիլիսոփայ և քաջ քարտուղար, որոյ գոն ծրեալ մատանց նորին յուով գրեանք ի սուրբ վանքս և յեկեղեցին որ ի Շէնքուշ» (Թ. Աղբար, Բ., էջ 458): Իր աշակերտներէն կը յիշուին երեք հոգի, Յովհաննէս Շէնքուշցի, Արիստակէս Խարբերդցի և Սիմէոն Դիտաղ (Նոյն, էջ 484): Իր ձեռքի արդիւնքներէն յիշուած է Լամբրոնացույ Պատարագի Մեկնութիւնը, օրինակուած 1613 թուին (Նոյն, էջ 484-6):

11. — Մելիսեք Վարդապետ. — Յիշուած է Կարապետ Երզնկացիի Ողբին մէջ իբրև «նորահասակ». — Պատմ. Կթղ. Կիւլ., էջ 271:

Վերագրեւելներէն զատ ուրիշներ ալ կը յիշուին, որոնք թէև Պետրոսէն դաւազան չեն ըստացած, բայց ժամանակ մը մտացած են անսր մօտ իբրև աշակերտ: Ասանք են, չգարձեալ այրուքներնական կարգով,

1. — Գրիգոր Գանակեցի (+ 1645). — Ծնած է Գանձակի Սպիտակաշէն գիւղը: Ժամանակ մը աշակերտած է Կարկանդակին: Հետագային եղած է պատրիարք Երուսաղէմի և մակակոչուած Պարոնտէր (1610-1645). — Սիրն, 1958, էջ 188:

2. — Կիրակոս Երեց Տրապիզոնցի (+ 1621). — Ըստ Դարանաղցի «բազում ժամանակս կեցեալ ի լսարանս Կարկանդակի Պետրոսին և էր կատարեալ փիլիսոփայ», բայց չէ ուզած վարդապետ դառնալ՝ նախընտրելով հետեիլ ճգնաւորական կեանքի (ժամանակագրութիւն, էջ 392): Անուպատական կեանքի իր բուսն փոփոքը կ'իրականացնէ Կիրակոս՝ Սաղմոսավանքի Սարգիս Եպիսկոպոսին հետ, Սիւնեաց աշխարհին մէջ հիմնելով Մեծ Անուպատը, ուր պահ մը կ'ըլլայ նաև «գրոց ուսուցիչ» (Դաւրիթեցի, Պատմութիւն, 1896, էջ 259):

Ե Կ Ե Ղ Ե Յ Ա Կ Ա Ն Ք - Բ Ե Մ Ա Կ Ա Ն Ք

● Եր. 1 Օգոստ. — Ս. Երկոստանի առաջինըն Գրիսոսի եւ Պոզսոսի՝ երեւաաներոց առաջինըն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պողոսի վերնամասրան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Տաթև Արղ. Ղարբիեան:

● Կիր. 2 Օգոստ. — Բարեկենդան Վարդավառի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Արշակ Արղ. Խաչատուրեան:

● Ուր. 7 Օգոստ. — Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան:

● Եր. 8 Օգոստ. — Յիւստակ Տաղանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատարան մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Կոմիտաս Արղ. Պատուէրեան:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Այլակերպութեան մեծահանդէս նախատօնակը: Հանդիսապետն էր Լուսարարպետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.: Ապա կատարուեցաւ Տեառնեղբոր Գահակալութեան նուիրուած հանդիսութիւն:

— Իրիկնադէմին, Մայր Տաճարին մէջ կատարուեցան «Եկեղեցւոյ եւ Հսկման կարգեր: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս.:

3. — Յովնաննեա Կարկառեցի, Գրիչ, եղբորորդի Պետրոս Կաթողիկոսի. Օրինակած է մէկ Աս Որս ճառք Գրիգոր Աստուածարանի (Զեռ. Ս. Բ. Թ. 794. Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, էջ 253-4): Յիշեալ ձեռագրին մէջ սենի հետեւեալ ռասնուար յիշատակագրութիւնը (էջ 110-111).

«Սրտիւս սենիմ փափաք բանիս, գործիւ ճմուռ շիմ սրաւեստիս, բայց աղաշիմ՝ սր հանդիպիս, սրտիւ տասյ՝ Տէր սղորմիս, զհաւրեղբաւր իմոյ Տեառն Տէր Պետրոս Կաթողիկոսիս, սր կամարար է սա գործիս. տաւր աէր սորա զկամս սրաիս, ւ առաջնորդեայ զիմքն ի բարիս»:

4. — Յովսէփ Սոնոզուն, Գրիչ, յՐ, 1589 ին, Կարկառ քաղաքին մէջ կ'օրինակէ Անանիա Շիրակացիի մէկ գործը. — Պատմ. Կթղ. Կիլիկիոյ, էջ 252:

Ն. ԵՊՍ. ՆՈՎԱԿԱՆ

● Կիր. 9 Օգոստ. — ՎՈՐԳԱՎԱՌ՝ (Տօն Այլակերպութեան Տեառն): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց լուսարարպետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.: Ս. Պատարագի արարողութենէն մաս մը ձայնասփռուեցաւ Յորդանանի Հաշի-ժական աստիօկայանէն:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Նեղաստան»: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս.:

● Բշ. 10 Օգոստ. — Յիւստակ մեռելոց: Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մատարան մէջ պատարագեց Հոգշ. Տ. Գանիէլ Արղ. Շամլեան: Ապա, Հոգշ. Տ. Գեորգ Վրղ. Նաղարեանի նախագահութեամբ, կատարուեցան հոգեհանգստեան կարգեր, նախ եկեղեցւոյ մէջ, ապա Կալիթը՝ Երանաշնորճ Տ. Կիրեղ Պարբ.ի շիրմին վրայ, և յետոյ Չամ-Թաղի գերեզմանավայրը:

● Ուր. 14 Օգոստ. — Նախատօնակին ի Ս. Յակոբ նախագահեց Գերշ. Տ. Նորայր Եպս.:

● Եր. 15 Օգոստ. — Ս. Թալէսի առաջինըն մերոյ եւ Սոնոզոնյ՝ Լուսին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճարի Ս. Գլխաղբի մատարան մէջ: Ժամարարն էր Արժ. Տ. Կարապետ Քհնյ. Անդրէասեան:

● Կիր. 16 Օգոստ. — Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրղ. Մամուր:

● Բշ. 17 Օգոստ. — Այսօր սկսաւ Ս. Աստուածածնայ վերափոխման տօնը կանխող ամենօրեայ հանդիսաւոր Ս. Պատարագներու մատուցումը Գեթեմանի Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

● Կիր. 23 Օգոստ. — Բարեկենդան Ս. Աստուածածնի պահոց: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ ժամարարն էր Հոգշ. Տ. Տաթև Արղ. Ղարբիեան: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ «Խաղաղօրհնէքի արարողութիւն, նախագահութեամբ Լուսարարպետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.ի:

● Ուր. 28 Օգոստ. — Նախատօնակը պաշտուեցաւ Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատարան մէջ: Հանդիսապետն էր Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան:

● Եր. 29 Օգոստ. — Տօն Եղակաթի Ս. Էջմիածնի: Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Էջմիածին մատարան մէջ: Ժամարարն էր Արժ. Տ. Կարապետ Քհնյ. Անդրէասեան:

— Կէսօրէ ետք, Լուսարարպետ Գերշ. Տ. Հայրիկ Արքեպս.ի զլխաւորութեամբ, Միաբան Հայրեր ինքնաշարժերով մեկնեցան Գեթեմանի ձորը ու «Հրաշափառուով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու վերափոխման մեծահանդէս նախատօնակը: — Գրչերասկիպրին, նոյն եկեղեցւոյ մէջ կատարուեցան նաև եկեղեցի եւ Հսկման կարգեր: Հանդիսապետն էր Հոգշ. Տ. Յովսէփ Վրղ. Մամուր: